

ԴԱՍ 2

ՄԻԵԴ ՎՃԻՌՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ
ԻՐԱՎԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ ԵՎ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐ

Այս դասը կազմված է 4 հատվածներից (մոտիվացնող ներածական տեսանյութ, դասի տեսական նյութ, բառարան և ինքնաստուգիչ հարցեր), որի ընդհանուր տևողությունն է 240 րոպե:

Սույն հեռաուսուցման դասի այս հատվածը յուրացնելու համար հարկավոր է 145 րոպե:


Ինքնաստուգիչ հարցերը և բացատրություններով ուղեկցվող դրանց պատասխանները ներառված չեն այս փաստաթղթում: Դրանք առանձին փաստաթղթերով ներկայացված են հեռաուսուցման փաթեթում:





*(հասանելի է Արդարադատության
ակադեմիայի կայքի հեռուստուցման
բաժնում)*

Նախորդ դասի ընթացքում Ձեզ ներկայացվեցին ՄԻԵԴ վճիռների կատարման եռությունն ու նպատակը: Նաև ներկայացվեց, թե ինչ նկարագիր ունի ՄԻԵԴ վճիռների կատարման գործընթացը, որոնք են այդ գործընթացին մասնակցող գլխավոր դերակատարներն ու հիմնական շահառուները: Ընդհանուր գծերով ցույց տրվեց, թե որն է ՄԻԵԴ վճիռների կատարման և կատարման նկատմամբ վերահսկողության հարաբերակցությունը:



Կարդացեք սույն դասի տեքստը և այն յուրացնելուց հետո միայն անցեք դասի հաջորդ մասերին (բառարան, ինքնաստուգիչ հարցեր):

Այս դասի ընթացքում Ձեզ ներկայացվելու են վճիռների կատարման պարտադիր բնույթի և պետության պարտավորությունների իրավական հիմքերը: Խոսվելու է իրավական որոշակի գործիքների, ներառյալ՝ սահմանադրական և կոնվենցիոն այն պահանջների մասին, որոնք առանցքային են ՄԻԵԴ վճիռների կատարման համատեքստում: Բացի դրանից, ներկայացվելու են Նախարարների կոմիտեի վերահսկողության ընդհանուր

բնութագիրն ու առանձնահատկությունները, առանձին խոսվելու է Եվրոպայի խորհրդի որոշ քաղաքական հռչակագրերի մասին, որոնք կարևոր նշանակություն են ունեցել և այսօր էլ ունեն վճիռների կատարման կառուցակարգերի զարգացման համար:

Այս դասի ընթացքում կարմիր թելի նման անցնելու է այն գաղափարը, որ վճիռների կատարումը պետության պարտավորությունն է, և դրա պատասխանատվությունը կիսում են պետական բոլոր մարմինները (իսկ այս գործում դատախազության և դատարանների դերը դժվար է գերազնահատել):

2.1 ՄԻԵԿ 39-ՐԴ, 41-ՐԴ և 46-ՐԴ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՄԻԵԴ ՎՃԻՌՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Երբ ՄԻԵԴ վճիռով արձանագրվում է Կոնվենցիայի մեկ կամ մի քանի հոդվածի խախտում, առաջ է գալիս Կոնվենցիայի անդամ պետության պատասխան գործողության անհրաժեշտության հարց: Պետության առաջնահերթ պարտավորությունն է ներպետական մակարդակում ձեռնարկել լրացուցիչ միջոցներ և պատշաճ կատարել տվյալ վճիռը: Հասկանալի է, որ ցանկացած դատական ատյանի, ընդ որում ինչպես ազգային, այնպես էլ վերազգային կամ

միջազգային դատական ատյանի կայացրած ակտ չի կատարվում ինքնաբերաբար: Դրա համար անհրաժեշտ է, որ գործի վճիռների կատարման և դրա նկատմամբ վերահսկողական մեխանիզմը, և կարևոր է, որ հստակ լինի երկու հանգամանք՝ ա) տվյալ ակտն իր բնույթով պետք է լինի պարտադիր, բ) այդ ակտի կատարումը պետք է լինի կատարողի պարտականությունը:



Տվյալ հոդվածների և ընդհանրապես ամբողջ կոնվենցիայի հայերենով տեքստը նաև հասանելի է ՄԻԵԴ պաշտոնական կայքում, հետևյալ հղումով՝ https://echr.coe.int/Documents/Convention_HYE.pdf:

ՄԻԵԴ վճիռների կատարման ողջ գործընթացի կոնվենցիոն հիմքը ՄԻԵԿ **46-րդ** և **39-րդ** հոդվածներն են:

Վճռի կատարման մասին կոնվենցիոն գլխավոր պահանջն ամրագրված է ՄԻԵԿ 46 րդ հոդվածով (**Վճիռների պարտադիր ուժն ու կատարումը**): Նրա նշանակությունը բազմաշերտ է. այն մի կողմից ընդգծում է ՄԻԵԴ վճռի պարտադիր բնույթը, իսկ մյուս կողմից ետևանում պետության վրա դնում է հստակ պարտավորություն **«կատարել Դատարանի վերջնական վճիռները ցանկացած գործերի վերաբերյալ, որոնցում նրանք կողմեր են»** (կետ 1):

Բացի դրանից, հենց այս դրույթով է սահմանվում, որ Նախարարների կոմիտեն է այն հաստատությունը, **«որը վերահսկողություն է իրականացնում դրա կատարման նկատմամբ»** (կետ 2):

Հատկանշական է, որ երբեմն ՄԻԵԴ վճիռներում արձանագրվածը հանգեցնում է այնպիսի տարբեր մեկնաբանությունների, որ վճռի կատարման համար առաջանում են խնդիրներ: Տվյալ հոդվածը լուծում է նաև այս խնդիրը և սահմանում է, որ Նախարարների կոմիտեն **«կարող է այդ հարցը վճռի մեկնաբանության համար հանձնել Դատարանի քննությանը»** (կետ 3):

Այլ կերպ՝ ՄԻԵԴ-ը Նախարարների կոմիտեի հայցով ներգրավվում է կատարման գործընթացին և իր մեկնաբանողական լիազորության կիրառմամբ ապահովում է կոնկրետ վճռի կատարումը: Այս դրույթով, փաստորեն, վճիռների կատարման գործընթացի կարևոր մասնակից է դառնում ՄԻԵԴ-ը:

Նրա դերակատարումն այստեղ չի սահմանափակվում միայն վճռի մեկնաբանությամբ. այն շատ ավելի լայն է, բայց այս մասին Ձեզ հանգամանալից կներկայացվի վճիռների կատարման գործընթացի ետև կառուցակարգերին և դերակատարներին նվիրված դասի ժամանակ:

Առաջին դասի ընթացքում խոսել ենք այն մասին, որ վճիռներից բացի կատարման ենթակա են ՄԻԵԴ որոշումները նույնպես: Դրա իրավական հիմքը վերը նշված՝ բարեկամական կարգավորումների մասին ՄԻԵԿ 39-րդ հոդվածն է, որի 4-րդ մասն առնչվում է կատարման գործընթացին ու դրա նկատմամբ վերահսկողությանը: Ըստ այդ դրույթի՝ **«[ՄԻԵԴ ցուցակից գործը հանելու մասին] որոշումը հանձնվում է Նախարարների կոմիտեին, որը վերահսկում է այդ որոշմամբ սահմանված բարեկամական**



Թեև առանձին դասի շրջանակում մենք խոսելու ենք վճիռների կատարման գործընթացին ՄԻԵԴ-ի ներգրավման եղանակների մասին, բայց մինչ այդ կարդացեք ՄԻԵԿ 46-րդ հոդվածն ամբողջությամբ և գտեք, թե ուրիշ ինչպես է ՄԻԵԴ-ը ներգրավվում վճիռների կատարման գործընթացին:

Կարգավորման պայմանների ի կատար ածելը»:

Ինչ վերաբերում է ՄԻԵԿ 41-րդ հոդվածին, ապա այն նույնպես առանցքային կարևորություն ունի վճիռների կատարման համատեքստում: Ըստ այդ հոդվածի՝ «Եթե Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից Արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Դատարանը որոշում է, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի փոխհատուցում [just satisfaction] տրամադրել»:



Նախորդ դասին Ձեզ առաջարկվել էր պատասխանել, թե ինչ է «արդարացի փոխհատուցումը»: Այս հասկացությունը նկարագրված է սույն դասի «ԲՆՈՒՐԱՆ» բաժնում. համեմատեք Ձեր պատասխանը դրա հետ:

Ինչպես տեսնում եք՝ տվյալ դրույթը ՄԻԵԿ-ին տալիս է հավելյալ հնարավորություն՝ որոշակի հանգամանքների հաշվառմամբ հատուցել դիմումատուի կրած նյութական կամ ոչ նյութական վնասը, իսկ Նախարարների կոմիտեի տիրույթում էլ ապահովվում է դրա կատարումը:

2.2 ԵՆ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՄԻԵԿ ՎՃԻՌՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ

Նախորդ ենթաթեմայում նկարագրված իրավական նորմերը հիմք են տալիս պնդելու, որ իրավական առաջնորդող մյուս փաստաթղթերի նման՝ Կոնվենցիայի դրույթների բովանդակությունը կամ տրամաբանությունը բխում է հենց դրա Նախաբանից (պրեամբլից):

«Սույն Կոնվենցիան ստորագրած կառավարությունները ... համակված վճռականությամբ՝ որպես միասնական հայացքներ և քաղաքական ավանդույթների, իդեալների, ազատության և իրավական պետության [the rule of law] ընդհանուր ժառանգություն ունեցող եվրոպական երկրների կառավարություններ՝ առաջին քայլերն անելի Համընդհանուր հռչակագրում ամրագրված որոշ իրավունքների հավաքական իրականացման [collective enforcement] ճանապարհին ... համաձայնեցին ներքոհիշյալի շուրջ». սա ՄԻԵԿ Նախաբանից է, և Նախաբանի այս հատվածից բխում է, որ Կոնվենցիան անբաժան մաս է հավաքական մի երաշխիքի, որը պետությունները միասնաբար պարտավորվել են ապահովել:

Տվյալ դիտանկյունից՝ ՄԻԵԿ վճիռների կատարումը սկզբունքորեն (in principle), և ընդհանուր առմամբ, Կոնվենցիայի ընդհանուր կատարման հատուկ դրսևորում է: Եվ հատուկ է նաև այն իմաստով, որ մի կողմից ՄԻԵԿ-ն արձանագրում է Կոնվենցիայի խախտում, մյուս կողմից էլ՝ Են մյուս հաստատությունն ապահովում է այդ խախտումն արձանագրող վճռի կատարումը:

Այս իմաստով Նախարարների կոմիտեի դերը վճիռների կատարման գործում յուրօրինակ է՝ հատկապես, որ այս հաստատությունն ինքնին գործում է Են անդամ

բոլոր պետությունների ներկայացվածությամբ, որոնք հավաքական (կոլեկտիվ) պարտավորություն ու պատասխանատվություն են ստանձնել՝ ապահովելու համար մարդու իրավունքները, ժողովրդավարությունը և իրավունքի գերակայությունը (the rule of law):

Են անդամ պետությունների կողմից ՄԻԵԴ վճիռների կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնելիս Նախարարների կոմիտեն, որպես կանոն, ուշադրություն է դարձնում երեք հանգամանքի վրա.

- արդյոք պետությունը վճարել է արդարացի փոխհատուցման համար ՄԻԵԴ-ի որոշած գումարը,

- արդյոք պետությունը ձեռնարկել է անհատական միջոցներ՝ ապահովելու, որ խախտումն ըստ էության վերականգնված է (օրինակ՝ դատարանը վերաբացել է ներպետական վարույթը),

- արդյոք պետությունը ձեռնարկել է ընդհանուր միջոցներ՝ կանխելու նմանատիպ նոր խախտումները (օրինակ՝ խորհրդարանը փոփոխել է ինդրահարուց օրենքի կարգավորումը, դատախազությունը վերանայել է օրենքի կիրառման պրակտիկան և այլն):

Այս մասին հստակ նշված է վճիռների կատարման նկատմամբ վերահսկողությանն առնչվող **Նախարարների կոմիտեի կանոններում** (կանոն 6): Այս ամենի հետ մեկտեղ՝ պետք է չմոռանալ, որ **Նախարարների կոմիտեն չի շրջանցում (ու չպետք է շրջանցի) Կոնվենցիայի պրեամբուլայում մատնանշված սուբսիդիարության սկզբունքը** (*principle of subsidiarity*) **և մշտապես հաշվի է առնում պետության թուլլատրելի հայեցողության շրջանակը, որը նույնպես նշված է պրեամբուլայում:**

Նաև հատկանշական է, որ 2010 թվականի փետրվարին կազմակերպված Ինտերլակենի համաժողովում Նախարարների կոմիտեն պարտավորվել է կատարելագործել և էլ ավելի ուժեղացնել վերահսկողության կառուցակարգերը՝ ապահովելով դրանց թափանցիկությունն ու արդյունավետությունը:

Դրանով պայմանավորված՝ Նախարարների կոմիտեն անմիջապես Նախաձեռնել և որդեգրել է ՄԻԵԴ վճիռների կատարման ու դրա նկատմամբ վերահսկողության նոր չափանիշներ/մեթոդներ, որոնք առ այսօր գործում են: Դրանք բազմատեսակ են՝ վերահսկողության երկընթաց կամ երկուղի (twin-track) մոտեցումից մինչև հաշվետվողականության ձևերի վերանայում, որոնց մասին առավել մանրամասն Ձեզ ներկայացվելու է հաջորդ դասերի շրջանակներում:



Ինչ էք կարծում, այս երեք արժեքների՝ մարդու իրավունքների, ժողովրդավարության և իրավունքի գերակայության ապահովման հարցը ինչպես և որքանով է կարգավորված Հայաստանի իրավաքաղաքական և ռազմավարական փաստաթղթերում:

Հայաստանի անկախության մասին հռչակագրի, ՀՀ Սահմանադրության և ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության (2007 ու 2020 թվականների) տեքստերում գտեք համապատասխան դրույթները և պատասխանեք հետևյալ հարցին՝ ինչ ծավալով են այդ փաստաթղթերը կարգավորում նշված արժեքների ապահովման հարցը:

2.3 ՄԻԵԴ ՎՃԻՌՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՌՆՉՎՈՂ ԵՄ ՀՌՉԱԿԱԳՐԵՐԸ

ՄԻԵԴ-ի վճիռների կատարման գործընթացի զարգացումը, ի թիվս այլևի, պայմանավորված է մի քանի էական հանգամանքներով: Ընդ որում, այդ հանգամանքները տարբեր են՝ եւս ընթացակարգերի կատարելագործումից, Նախարարների կոմիտեի որդեգրած նոր մեթոդների ներդրումից մինչև ներպետական կառուցակարգերի և իրավակիրառ պրակտիկայի վերանայում, իրավասու պետական մարմինների սիներգիայի (synergies) ապահովում, նրանց միջև փոխգործակցության մեխանիզմների կատարելագործում և այլն:

Կարևոր է արձանագրել, որ ՄԻԵԴ վճիռների կատարման արդյունավետությունը բարձրացնելու խնդիրը պարբերաբար քննարկման առարկա է դարձել եւս բազմաթիվ վերաբերելի փաստաթղթերում, ներառյալ՝ **քաղաքական հռչակագրերում**: Ինտերլակենում (Շվեյցարիա, 2010 թ.), Իզմիրում (Թուրքիա, 2011 թ.), Բրայթոնում (Մեծ Բրիտանիա, 2012 թ.), Բրյուսելում (Բելգիա, 2015 թ.) և Կոպենհագենում (Դանիա, 2018 թ.) բարձրաստիճան համաժողովների ընդունած հռչակագրերն ասվածի լավագույն օրինակներ են: Դրանք իրական նախադրյալներ են ստեղծել ՄԻԵԴ-ի ապագա զարգացման և ՄԻԵԿ-ի իմպլեմենտացիայի մարտահրավերների հաղթահարման համար:



Ուշադիր կարդացեք Ինտերլակենի, Իզմիրի, Բրայթոնի, Բրյուսելի և Կոպենհագենի հռչակագրերը: Դրանց ո՞ր դրույթները կամ գաղափարները կառանձնացնեք, որոնք, Ձեր գնահատմամբ, հավելյալ կարևորություն են ներկայացնում ՄԻԵԴ վճիռների կատարման և այդ կատարման նկատմամբ վերահսկողության կառուցակարգերի զարգացման համար:

<https://bit.ly/3k0bS4v>

Ինտերլակենի հռչակագրով դրվեց ՄԻԵԴ վճիռների կատարման և դրա նկատմամբ վերահսկողության կառուցակարգերի զարգացման հիմքը: Այն ընդգծեց վճիռների կատարման «առավել արդյունավետ և թափանցիկ» վերահսկման գործիքներ ստեղծելու անհրաժեշտությունը:

Իզմիրի հռչակագրով վերահաստատվեց դրա կարիքը և շեշտվեց «վճիռների կատարման կարևորությունը»՝ պետություններին վերապահելով անհրաժեշտ միջոցներ ընտրելու սեփական հայեցողությունը:

<https://bit.ly/3k2UoEQ>

<https://bit.ly/3rLhG67>

Բրայթոնի հռչակագիրը մեկ քայլով առաջ անցավ: Դրանով անդամ պետություններին խրախուսվեց «զարգացնել ներպետական կարողությունները և մեխանիզմները»՝ երաշխավորելու համար վճիռների արագ կատարումը: Ավելին՝ այն նաև ընդգծեց, որ պետք է մեծացնել պետության ներկայացուցչի (Government agent) համակարգող (կոորդինացնող) դերը:

Բրայթոնին հաջորդած **հոչակագիրն** էլ կոչ արեց մասնակից պետություններին որդեգրել «հնարավոր նոր միջոցներ» (“possible new measures”)՝ կատարելագործելու վճիռների կատարման գործընթացը և ապահովելու եւս անդամ պետությունների, ՄԻԵԴ-ի ու Նախարարների կոմիտեի միջև «բաշխված պատասխանատվությունը» (shared responsibility):

<https://bit.ly/3L62M20>

<https://bit.ly/3EzQ2yl>

Իսկ **Կոպենհագենի հոչակագիրը**, հղում կատարելով Նախորդ բոլոր հոչակագրերին, վերահաստատելով արձանագրված ձեռքբերումները և առկա խնդիրները, հատուկ ընդգծեց, որ «ներպետական մակարդակում Կոնվենցիայի անարդյունավետ կիրարկումը, հատկապես մարդու իրավունքների համակարգային և կառուցվածքային լուրջ խնդիրների մասով, մնում է կոնվենցիոն համակարգի առջև ծառայած հիմնական մարտահրավերը»՝ դրա հետ մեկտեղ շեշտելով, որ վճիռների կատարումը ոչ այլ ինչ է, քան «առանցքային պարտականություն» (“a key obligation”):

Եւս քաղաքական այս հոչակագրերն ուղղված են անդամ պետություններին, որոնք ընդունված ընթացակարգերով միացել են այդ փաստաթղթերին: Դա, համապատասխանաբար, նշանակում է, որ պետության պարտավորությունը բաշխված է պետական իշխանության բոլոր թևերի միջև. իրավասու բոլոր պետական մարմինները/հաստատությունները կրում են իրենց բաժին պարտականությունը և համաչափ պատասխանատու են ՄԻԵԴ վճիռների արագ ու լիարժեք կատարման համար:

● Դրա հետ մեկտեղ, եւս քաղաքական հոչակագրերի համակարգային վերլուծությունը հիմք է տալիս ամփոփել մի քանի եզրահանգումներ, որոնք առանցքային են ՄԻԵԴ վճիռների կատարման գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու համար.

● աջակցել վճիռների կատարման գործընթացը համակարգող մարմին (Հայաստանում այս դերը վերապահված է Միջազգային իրավական հարցերով ներկայացուցչին, Նախկին անվանմամբ՝ ՄԻԵԴ-ում ՀՀ ներկայացուցչին), կատարելագործել նրա գործիքակազմը, զարգացնել կարողությունները, դերն ու ազդեցությունը,

● մշակել համակարգված գործողությունների նոր հայեցակարգային մոտեցումներ (ռազմավարական քայլերի հերթականություն)՝ ապահովելով գործընթացում ներգրավված գործող անձանց քայլերի փոխադարձ ու ներդաշնակ կապը, սիներգիան,

● հաղթահարել բարդ բնույթի վճիռները մեկնաբանելու դժվարությունները՝ վեր հանելու համար պահանջվող միջոցները (հատկապես՝ ընդհանուր միջոցները) և բացահայտելու համար պրակտիկայում հանդիպող խոչընդոտները,

- գործընթացին Ներգրավել Սահմանադրությամբ հստակ առաքելություն ունեցող դատախազության և դատական իշխանության մարմիններին, ապահովել խորհրդարանի մաքսիմալ ներգրավվածությունը և պատգամավորների մաքսիմալ հետաքրքրությունը, կարևորել ոլորտում քաղաքացիական հասարակության և մեդիայի ակտիվացումը,
- մեծացնել եւս Նախարարների կոմիտեի գործունեության տեսանելիությունը (նկատելիությունը):



Ձեր կարծիքով ինչպե՞ս են ք ա ղ ա ք ա ց ի ա կ ա ն հասարակությունը և մեդիան նպաստում ՄԻԵԴ վճիռների կատարման գործընթացին: Եվ ինչու՞: Բերեք երկուական հիմնավորում:

2.4 ՄԻԵԴ ՎՃԻՌՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Նախ և առաջ, արձանագրենք, որ ներպետական գործիքակազմի զարգացման և պետական առանձին կառույցների ու քաղաքացիական հասարակության ներգրավվածության ապահովման հիմքում միջազգային/եվրոպական իրավական չափանիշների բացի նաև (ու հատկապես) սահմանադրաիրավական պահանջներն են:

Նախորդ ենթաթեմայում նշված եզրահանգումների համատեքստում ակնհայտ է, որ ՄԻԵԴ վճիռների կատարման գործընթացի կատարելագործման համար սահմանադրաիրավական հիմքերը քիչ չեն ու բազմատարր են: Սահմանադրության որևէ դրույթ կամ պահանջ, որը դուռ է բացում պետական (տեղական ինքնակառավարման) մարմնի գործիքակազմի կատարելագործման համար, հնարավորություն է տալիս կայացնելու և զարգացնելու այս կամ այն կառուցակարգը, վերաբերելի է ՄԻԵԴ վճիռների կատարմանը: Նման դրույթներն ընդհանուր նպաստում են այս գործընթացին. դրանք նաև ուղղված են Կոնվենցիայի ընդհանուր կատարմանը (իմպլեմենտացիային):

Սահմանադրության նորմերի նախատեսած հնարավորությունների ներքո ՄԻԵԴ վճիռների կատարման օրինակները շատ են՝ սեփականության իրավունքի երաշխավորում, ազատությունից զրկված անձանց իրավունքների պաշտպանություն և խթանում, արդար դատաքննության երաշխիքների ծավալի ընդլայնում, ոչ նյութական վնասի հատուցման մեխանիզմի ներդրում, այլընտրանքային ծառայության կատարելագործում և այլն): Եվ սույն ենթաթեմայում, բնականաբար, մենք չենք քննարկելու վերաբերելի բոլոր դրույթները: Բայց կան մի քանի առանցքային սահմանադրական հոդվածներ, որոնց մասին խոսելն այստեղ կարևոր է:

Առաջին խմբում կներկայացվեն Սահմանադրության 3-րդ և 6-րդ հոդվածները:

Սահմանադրության 3-րդ հոդվածն ի թիվս այլնի սահմանում է, որ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգումն ու պաշտպանությունը «հանրային իշխանության պարտականություններն են» (մաս 2), և հանրային իշխանությունը «սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն

գործող իրավունք» (մաս 2):

Սահմանադրության 6-րդ հոդվածն էլ նախատեսում է, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք «իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով» (մաս 1):

Գործնականում այս երկու հոդվածները հաճախ հակադրվում են միմյանց՝ փոխանակ փոխըացնեն մեկը մյուսին: Շատ ժամանակ պետական մարմինները հեշտությամբ են «շրջանցում» 3-րդ հոդվածը կամ «թաքնվում» են 6-րդ հոդվածի հետևում: Դա չի կարող ունենալ ծանրակշիռ որևէ հիմնավորում. ավելին՝ պետք է թույլ չտալ, որ Սահմանադրության 6-րդ հոդվածը գերակայի 3-րդ հոդվածի նկատմամբ (որն, ի դեպ, Սահմանադրության անփոփոխելի հոդվածներից է):

Երկրորդ խումբը կազմում են Սահմանադրության 5-րդ և 81-րդ հոդվածները:

Ըստ 5-րդ հոդվածի՝ Սահմանադրությունն է, որն ունի «բարձրագույն իրավաբանական ուժ», այսինքն՝ երկրի թիվ 1 «օրենքը» (law) Սահմանադրությունն է:

Ըստ 81-րդ հոդվածի՝ հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս «հաշվի է առնվում Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան»:

Ճիշտ է, Սահմանադրության 5-րդ հոդվածի ներքո պետական մարմինն ունի լայն և կայուն հայեցողություն, բայց այդ հայեցողությունն անսահմանափակ չէ: Ավելին՝ հիմնական իրավունքների և ազատությունների հետ առնչվելիս պետք է և՛ ներդրվեն միջազգային իրավական չափանիշները, և՛ մշակվեն ու ներդրվեն սեփական չափանիշները: Եվ այստեղ դատարանների ու դատախազության դերը հատկապես կարևոր է, քանի որ նրանք կոնկրետ ոլորտի քաղաքականություն մշակող սահմանադրական մարմիններ են, և այդ քաղաքականության ներքո իրենց լիազորություններն են իրականացնում տարբեր պետական մարմիններ ու պաշտոնատար անձինք:

Այլ կերպ ասած՝ Սահմանադրության նշված հոդվածները պետության (և դրա իրավասու մարմինների) համար լավագույնս ստեղծում են իրավական հենք՝ ներդնելու միջազգային/եվրոպական իրավական չափանիշները և մշակելու, իրացնելու ու վերահսկելու մարդու իրավունքների ներպետական չափանիշները:

2.5 ՄԻԵԴ ՎՃՌԻՑ ՀԵՏՈ ԳՈՐԾԵՐԻ ՎԵՐԱԲԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ՎՃԻՌՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԵՎՈՐ ՏԱՐԻ

Այս և նախորդ դասերից Դուք արդեն գիտեք, որ ՄԻԵԴ վճռի կատարման անհատական միջոցներից մեկը ներպետական վարույթների վերաբացումն է: Են անդամ պետության կողմից ՄԻԵԴ վճիռների կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնելիս նախարարների կոմիտեն ուշադրություն է դարձնում նաև այն հարցի վրա, թե արդյոք պետությունը ձեռնարկել է կոնկրետ անհատական միջոցներ: Կոնկրետ գործերով ամենակարևոր միջոցը, որին նախարարների կոմիտեն հատուկ ուշադրություն է դարձնում, ներպետական վարույթի վերաբացումն է: Նման գործերով, նախարարների կոմիտեի

վերահսկողական գնահատմամբ, վերաբացումն «արդյունավետ և երբեմն միակ ճանապարհն է», որով հնարավոր է վերականգնել այն վիճակը (դրույթումը), որն առկա էր մինչև անձի իրավունքի խախտումը (restitutio in integrum):

Ես մի շարք փաստաթղթեր, այդ թվում՝ Նախարարների կոմիտեի թիվ (2000)2 և (2004)6 հանձնարարականները (ռեկոմենդացիաները), երաշխավորում են restitutio in integrum-ը:

Հատկանշական է, որ այն երաշխավորվում է նաև մեր Սահմանադրությամբ, որը կարելի է դուրս բերել վերը քննարկված սահմանադրական դրույթներից: Եվ ներպետական մակարդակում վարույթների վերաբացման ինստիտուտի կարևորությունն ընդգծելու, հետևաբար՝ նաև դրա ճիշտ ընկալումն ու ապահովումը երաշխավորելու համար կարևոր է, որ իրավասու պետական մարմինները/պաշտոնատար անձինք (նաև ու հատկապես՝ դատախազներն ու դատավորները) ուշադրության կենտրոնում պահեն մի քանի եզրահանգում, որոնք հենված են ՄԻԵԿ պահանջների վրա.

● վարույթների վերաբացումը ՄԻԵԿ վճիռների/որոշումների կատարման համար ունի հիմնարար նշանակություն, քանի որ դրանով ապահովվում է restitutio in integrum-ը,

● restitutio in integrum-ը երաշխավորվում է ոչ միայն Կոնվենցիայով և ՄԻԵԿ իրավաբանությամբ, այլ նաև Հայաստանի Սահմանադրությամբ,

● վարույթների վերաբացումը խախտման արդյունքում ի հայտ եկած հետևանքների վերացման կամ իրավունքների խախտման վերականգնման արդյունավետ, իսկ երբեմն միակ միջոցն է՝ ի շահ հետազայում նմանատիպ իրավախախտումների կանխման,

● վարույթների վերաբացումն արդարադատության հասանելիության (access to justice) անբաժանելի և կարևոր մաս է,

● վարույթների վերաբացման տարրը մեծ դեր ունի ԵԽ-ում հիմնարար սկզբունք, իսկ Հայաստանում հիմնարար ազգային շահ համարվող իրավունքի գերակայության (the rule of law) համար:

Ճիշտ է՝ Կոնվենցիայի շրջանակում պետությունն ունի հայեցողություն, թե ինչպես կատարել ցանկացած գործերի վերաբերյալ ՄԻԵԿ վերջնական վճիռները, այնուամենայնիվ, պետք է հիշել, որ կոնվենցիոն ու սահմանադրական պահանջների ներքո պետական մարմինների հայեցողությունն ունի սահմաններ, որոնք հստակ կառուցակարգերով վերահսկելի են թե՛ ազգային, թե՛ վերազգային մակարդակում:

ԲԱՌԱՐԱՆ



Այս հատվածում ներկայացված են դասի
սյուժին առնչվող առանցքային
Եզրույթները և դրանց
բացատրությունները: Դրանք Ձեզ
կօգնեն դասի սյուժեն ավելի հեշտ
ընկալել: Եզրույթների
բովանդակությունն ուշադրությամբ
ուսումնասիրելու համար անհրաժեշտ է
մոտ 50 րոպե:

Ուշադրությամբ ծանոթացեք տերմիններին
(կոնցեպտներին), իսկ դասի տեքստի յուրացման
հետ կապված դժվարությունների դեպքում կրկին
անդրադարձեք դրանց:



ԲԱՌԱՐԱՆ

Մարդու իրավունքներ, ժողովրդավարություն և իրավունքի գերակայություն

Եվրոպայի խորհրդի երեք հիմնարար արժեքներ, որոնք միաժամանակ այդ կազմակերպության գործունեության հիմնասյուներն են:

Նախարարների կոմիտե

Եվրոպայի խորհրդի՝ որոշում կայացնող կառավարական մարմին (որի շրջանակներում իրավահավասար հիմունքներով քննարկվում են եվրոպական հասարակության առջև ծառայած խնդիրների լուծման ազգային մոտեցումները) և կոլեկտիվ համահավաք (որտեղ ձևավորվում են վերոնշյալ խնդիրների համընդհանուր եվրոպական լուծումները), որը եւս խորհրդարանական վեհաժողովի հետ միասին պաշտպանում է եւս - ի հիմնարար արժեքներն ու վերահսկում անդամ պետությունների ստանձնած պարտավորությունների կատարումը:

Նախարարների կոմիտեի կանոններ

Նախարարների կոմիտեի կողմից հաստատված կանոններ, որոնցով, ի թիվս այլ հարցերի, կարգավորվում են նաև ՄԻԵԴ վճիռների և բարեկամական կարգավորմամբ ա-վարտված գործերով որոշումների կատարման գործընթացի վերահսկողության ընթացակարգն ու պայմանները:

Քաղաքական հռչակագրեր

Ինտերլակենի (2010 թ.), Իզվիրի (2011 թ.), Բրայթոնի (2012 թ.), Բյոուտլի (2015 թ.) և Կոպենհագենի (2018 թ.) բարձրաստիճան համաժողովներում ընդունված հռչակագրեր՝ միտված ՄԻԵԴ ապագա զարգացմանը և ՄԻԵԿ իմպլեմենտացիայի մարտահրավերների հաղթահարմանը:

Սուբսիդիարության սկզբունք

Կոնվենցիայի համակարգի հիմնական սկզբունքներից մեկը, որը ՄԻԵԴ-ի որոշակի համատեքստում նշանակում է, որ Կոնվենցիայով նախատեսված իրավունքների պաշտպանության և իրականացման պատասխանատվությունը, ինչպես նաև համապատասխան միջոցների ընտրությունն ավելի շատ ընկնում է Բարձր պայմանավորվող կողմի, քան ՄԻԵԴ-ի վրա:

Արդարացի փոխհատուցում

Վճրի կատարման անհատական միջոց, հատուցման ձև, որի ՄԻԵԴ-ի կողմից հատկացումը Կոնվենցիայով (և դրան կից Արձանագրությամբ) երաշխավորված որևէ իրավունքի խախտման արձանագրման ինքնատիկության հետևանքը չէ (ի դեպ, ՄԻԵԴ-ի կողմից հատկացումը պետք է լինի «արդարացի», այսինքն՝ հաշվի է առնվում յուրաքանչյուր գործի առանձնահատկությունները, հետևաբար՝ կարող է որոշվել, որ Կոնվենցիայի խախտման արձանագրումն ինքնին բավարար արդարացի փոխհատուցում է):

Restitutio in integrum

Մինչև իրավունքի խախտումը եղած դրության վերականգնում:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹԵՐ

Կարդացեք լրացուցիչ նյութերը՝ որքանով հնարավորություն է տալիս օտար լեզվի Ձեր իմացությունը: Սա չի նշանակում, որ առանց տվյալ նյութերի ընթերցման հնարավոր չէ լիարժեք յուրացնել դասի բովանդակությունը, բայց նշված լրացուցիչ աղբյուրները կօգնեն առավելապես պատրաստված լինել մյուս դասերին, ինչպես նաև վեր հանել նոր հարցեր և մտածել դրանց շուրջ:





ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹԵՐ

Explanatory Report to Protocol No. 14 to the Convention for the Protection of Human Rights and Fundamental Freedoms, amending the control system of the Convention, Strasbourg, 13.V.2004,
— Ձեկույցում բացատրվում է 39-րդ, 41-րդ և 46-րդ հոդվածների բովանդակությունը, և այստեղ նկարագրված են տվյալ հոդվածների մշակման նպատակները:

<https://bit.ly/3rITL7o>

Rules of the Committee of Ministers for the supervision of the execution of judgments and of the terms of friendly settlements (Adopted by the Committee of Ministers on 10 May 2006, Amended on 18 January 2017), — Կանոնների երկրորդ բաժինը նվիրված է ՄԻԵԴ վճիռների կատարման նկատմամբ վերահսկողության մեթոդաբանությանը:

<https://bit.ly/3vEqxHU>

Ինտերլակենի (2010 թ.), Իզմիրի (2011 թ.), Բրայթոնի (2012 թ.), Բոյուսեյի (2015 թ.) և Կոպենհագենի (2018 թ.) հռչակագրեր, — ԵԽ քաղաքական այս հռչակագրերը պարունակում են ՄԻԵԴ վճիռների կատարմանը և այդ կատարման նկատմամբ վերահսկողությանը վերաբերող դրույթներ:

<https://bit.ly/3K4NZDC>

Recommendation No. Rec(2000)2 of the Committee of Ministers to member states on the re-examination or reopening of certain cases at domestic level following judgements of the European Court of Human Rights, — Նախարարների կոմիտեի այս հանձնարարականը (ռեկոմենդացիան) վերաբերում է ՄԻԵԴ վճիռների կատարման համատեքստում ներպետական վարույթների վերաբացմանը:

<https://bit.ly/3OuY3t2>

Recommendation No. Rec(2004)6 of the Committee of Ministers to member states on the improvement of domestic remedies, — Նախարարների կոմիտեի այս հանձնարարականը (ռեկոմենդացիան) վերաբերում է ՄԻԵԴ վճիռների կատարման համատեքստում ներպետական վարույթների վերաբացմանը:

<https://bit.ly/3K9YBkq>